ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հոկտեմբերի 7-ից 11-ը Իտալիայի Հանրապետության քաղաք Միլան գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

1) Անդրանիկ Հակոբյան՝ ՀՀ ՊԵԿ Միջազգային հարկման վարչության Տրանսֆերային գնագոյացման բաժնի պետ,

2) Էմիլ Հարությունյան՝ Միջազգային հարկման վարչության Տրանսֆերային գնագոյացման բաժնի ավագ հարկային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Իտալիայի հանրապետություն քաղաք Միլան, 2025թ. հոկտեմբերի 7-ից 11-ը:

3. Հրավիրող կողմը.

Իտալիայի հարկային մարմինը՝ ՏՀՋԿ/ՄԱՋԾ «Հարկային տեսուչներ առանց սահմանների» (TIWB) կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր՝ Իտալիայի հարկային մարմնի հետ քննարկել համատեղ իրականացվող նախնական գնագոյացման պայմանավորվածության պիլոտային ծրագիրը, ինչպես նաև ձեռքբերման ընդհանուր կարգավորումները, առկա խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

5. Քննարկված թեմաները.

Հանդիպման շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Իտալիայի Հանրապետության կարգավորումները նախնական գնագոյացման պայմանավորվածությունների վերաբերյալ,
- Նախնական գնագոյացման պայմանավորվածությունների տեսակները և առանձնահատկությունները,
- Նախնական գնագոյացման պայմանավորվածության պիլոտային ծրագրի շրջանակներում համադրելիության վերլուծությունը և հետագա քայլերը,
- Տեխնիկական աջակցության մասին հաշվետվության նախնական տարբերակը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Եռօրյա հանդիպումների ընթացքում բարձրացվել են վերը նշված թեմաներին առնչվող հարցեր, ինչի շուրջ կառուցվել են քննարկումները և փորձի փոխանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշվել են ծրագրի հաջորդող քայլերը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպմանը մասնակցելը հնարավորություն տվեց ծանոթանալ նախնական գնագոյացման պայմանավորվածության վերաբերյալ Իտալիայի հարկային մարմնի փորձին, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ, ինչպես նաև թույլ տվեց բարձրացնել ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կարողությունները և կատարվող համապատասխան աշխատանքների որակը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Անդրանիկ Հակոբյան՝

Էմիլ Հարությունյան՝

13. 10. 2025թ.